

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ԷՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ**

Քաղաքացիական շրջանառության մասնակիցներն իրենց սուբյեկտիվ իրավունքների, ազատությունների և օրինական շահերի դատական պաշտպանությունն իրականացնում են օրենքով սահմանված կարգով դատարան հայցադիմում (դիմում) ներկայացնելու միջոցով:

Հայցը կամ դիմումը դատարան՝ իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ իրավական պետություններում, ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ<sup>2</sup>:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը<sup>3</sup>, արտացոլելով Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի<sup>4</sup> 6-րդ հոդվածով սահմանված արդար դատաքննության իրավունքի դրույթները, սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունք-

---

<sup>1</sup> ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ, գիտ. դեկավար՝ ի. գ. դ., դոցենտ Վ. Հովհաննիսյան:

<sup>2</sup> Տե՛ս, ՀՀ Սահմանադրական դատարանի 28.11.2007 թ. թիվ ՍԴՈ-719 որոշումը:

<sup>3</sup> Ընդունվել է 05.07.1995 թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2005.12.05/Հատուկ թողարկում, հոդ. 1426: Այսուհետ՝ ՀՀ Սահմանադրություն:

<sup>4</sup> «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիան ընդունվել է 1950 թ. նոյեմբերի 4-ին: Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2002 թ.-ի ապրիլի 26-ին:

ների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք (18-րդ հոդված), իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետներում իր գործի հրապարակային քննության իրավունք (19-րդ հոդված): Վերոնշյալ դրույթների միասնականությունը կազմում է դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների բովանդակությունը՝ միաժամանակ կանխորոշելով նաև քաղաքացիական գործերի քննության հիմնական սկզբունքների գոյությունը (օրինակ՝ դատարանի անկախության և միայն օրենքին ենթարկվելու, գործերի քննության հրապարակայնության, կողմերի իրավահավասարության և այլն), որոնք էլ իրենց հերթին ապահովում են Հայաստանի Հանրապետությունում իրականացվող քաղաքացիական դատավարության ժողովրդավար բնույթը<sup>1</sup>:

Արդար դատաքննության իրավունքը կարող է սահմանվել որպես մարդու՝ դատական պաշտպանության իրավունքի իրականացումն ապահովելուն ուղղված միջազգային և ներպետական նորմերով ամրագրված և երաշխավորվող սուբյեկտիվ դատավարական իրավունքների համակցություն, որը յուրաքանչյուրին ապահովում է օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անկողմնակալ դատարան առանց խոչընդոտի դիմելը, երաշխավորում է գործի քննությունը հրապարակայնության, կողմերի հավասարության և մրցակցության պայմաններում իրականացվելը, ապահովում է հիմնավորված դատական ակտ ստանալը, ինչպես նաև երաշխավորում է դատական պաշտպանության իրավունքի խախտմանը հանգեցնող արդար դատաքննության իրավունքի մաս կազմող որևէ իրավունքի խախտման վերացման հնարավորությունը<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս **Հովհաննիսյան Վ. Վ.**, Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները Հայաստանում, Մենագրություն, ԵՊՀ հրատ., Եր., 2013, էջ 99:

<sup>2</sup> Տե՛ս **Հ. Մ. Տեր-Վարդանյան**, Արդար դատաքննության իրավունքի սահմանադրաիրավական հիմքերը Հայաստանի Հանրապետությունում, Ի.գ.թ. աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2009, էջ 38-40:

Դատական պաշտպանության իրավունքը ենթադրում է նախնառաջ խախտված կամ վիճարկվող իրավունքների պաշտպանության և վերականգման պահանջով դատարան դիմելու անձի իրավունքը, իսկ մյուս կողմից դատարանի պարտականությունը քննելու գործը և նրանով կայացնելու օրինական և հիմնավորված որոշում: Խախտված իրավունքի պաշտպանության պահանջով յուրաքանչյուր շահագրգիռ անձ իրավունք ունի դիմելու դատարան: Ընդ որում՝ քաղաքացիական շրջանառության մասնակիցներն առաջին ատյանի դատարան են դիմում հայցադիմում (դիմում) ներկայացնելու միջոցով: Հետևաբար, դատարան դիմելու իրավունքն ուղղակիորեն բխում է անձի դատական պաշտպանության իրավունքի բովանդակությունից, որն ապահովելու պարտականությունն ընկնում է պետության վրա: Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածով սահմանվում է, որ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները (այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքը) բարձրագույն արժեքներ են, և պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Ուստի, Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը պետք է դատական պաշտպանության իրավունքի իրականացման համար անհրաժեշտ կառուցակարգեր պարունակի:

ՀՀ Սահմանադրական դատարանը դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքը բնութագրում է որպես մարդու և քաղաքացու անօտարելի իրավունքներ, նրա մյուս իրավունքներն ու ազատություններն ապահովող երաշխիք<sup>1</sup>: Դատական պաշտպանության իրավունքին համապատասխանում է ՀՀ-ում սահմանված դատական համակարգի մեջ մտնող ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանների պարտականությունը՝ քաղաքացիական դատավարության կարգով իրականացնելու տվյալ սուբյեկտիվ իրավունքը<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս նաև ՀՀ Սահմանադրական դատարանի 27.05.2008 թ. ՍԴՈ-754 և 08.10.2008 թ. ՍԴՈ-765 որոշումները:

<sup>2</sup> Տե՛ս նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ /ընդհանուր խմբագրությամբ՝ **Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի**, -Եր., «Իրավունք», 2010, էջ 208-209:

ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է Հայաստանի Հանրապետության տարածքում իրավական կարգավորման սկզբունքները և, որպես բարձրագույն իրավաբանական ուժով օժտված ակտ, օրենսդրության իրավական հիմքն է: Ուստի Սահմանադրությամբ ամրագրված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգն ու պայմանները պետք է սահմանվեն օրենքով: Այսպես՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի<sup>1</sup> 9-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ բացառապես օրենքներով են սահմանվում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը<sup>2</sup>, որպես դատական պաշտպանության իրավունքի հետ կապված համասեռ հասարակական հարաբերությունները կարգավորող հիմնական նորմերը համակարգված և կանոնակարգված ձևով շարադրող օրենք, սահմանում է Հայաստանի Հանրապետությունում դատարան դիմելու կարգն ու պայմանները:

Դատարան դիմելու օրենքով սահմանված կարգն, ըստ էության, քաղաքացիների և իրավաբանական անձանց՝ դատարան դիմելու իրավունքի իրականացման երաշխիք է:

ՀՀ ՔԴՕ 2-րդ հոդվածի համաձայն՝ շահագրգիռ անձն իրավունք ունի սույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար:

ՀՀ ՔԴՕ 3-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա:

Հայցադիմում կամ դիմում ներկայացնելը դատարան դիմելու օրենքով սահմանված ձև է: Քաղաքացիական գործով վարույթի հարուցման համար անհրաժեշտ է, որ հայցադիմումը (դիմումը) ներկայացված լինի օրենքով սահմանված կարգով: Այսպես, քաղաքացիա-

---

<sup>1</sup> Ընդունվել է 03.04.2002թ., ուժի մեջ է մտել 31.05.2002թ.: Տե՛ս ՀՀՊՏ N 49(224),ՀՕ-320:

<sup>2</sup> Ընդունվել է 17.06.1998 թ., ուժի մեջ է մտել 01.01.1999 թ.: Տե՛ս ՀՀՊՏ 1998.09.09/20(53): Այսուհետ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք կամ ՀՀ ՔԴՕ:

կան դատավարության օրենսգիրքը սահմանում է այն պարտադիր պայմանները, որոնց պահպանման դեպքում հայքը ենթակա է վարույթ ընդունման: Այդ պայմաններից մեկն էլ հանդիսանում է ընդդատությունը:

Այսպես, ՀՀ ՔԴՕ 82-րդ հոդվածի համաձայն՝ հայքը հարուցվում է պատասխանողի բնակության (գտնվելու) վայրի դատարան:

ՀՀ ՔԴՕ 90-րդ հոդվածի համաձայն՝ դատավորը պարտավոր է վարույթ ընդունել սույն օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ ներկայացված հայցադիմումը:

Հետևաբար, դատավորը հայցադիմումը վարույթ ընդունելիս նախ և առաջ պետք է պարզի՝ արդյոք հայցադիմումը ներկայացվել է այն դատարանին, որին այն ընդդատյա է: Ընդ որում, նշված կանոնի չպահպանման դեպքում հայցադիմումը ենթակա է վերադարձման (ՀՀ ՔԴՕ 92-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ):

Նշվածի հիման վրա, կարող ենք փաստել, որ ընդդատությունը հանդես է գալիս որպես դատարան դիմելու օրենքով սահմանված կարգի պայմաններից մեկը:

Միննույն ժամանակ, պետք է նշել, որ ընդդատությունը պետք է դիտարկվել ոչ թե որպես դատարան դիմելու իրավունքի առաջացման պայման, այլ դատարան դիմելու իրավունքի իրականացման պայման, քանի որ ընդդատության ինստիտուտի խնդիրը հանդիսանում է այն դատական մարմնի որոշումը, որն իրավասու է քննելու և լուծելու կոնկրետ կատեգորիայի իրավաբանական գործը:

Ավելին՝ իրավաբանական գործերի ընդդատությունը սահմանվում է միայն օրենքով և դատարանները իրավունք չունեն կամայականորեն այն փոփոխել: Միայն օրենքով պետք է սահմանվեն ընդդատության փոփոխման դեպքերը:

Ընդդատության, հետևաբար և դատական պաշտպանության սահմանադրորեն ամրագրված իրավունքի խախտման են հանգեցնում այն դեպքերը, երբ գործը քննում է այն դատարանը, որը տվյալ գործը քննելու իրավասություն չունի, կամ ընդհակառակը, երբ դատարանը, որը իրավասու է տվյալ գործը քննելու, հրաժարվում է այն քննության ընդունել:

Սահմանադրական վկայակոչված նորմերի առկայության պայմաններում կարելի է ասել, որ անձի խախտված կամ վիճարկվող իրավունքների, ազատությունների և օրինական շահերի դատական

պաշտպանության իրավունքը ձեռք է բերել անսահմանափակ բնույթ:

Վկայակոչվածի հիման վրա, կարող ենք նշել, որ ցանկացած անձ իր խախտված կամ ենթադրյալ խախտված իրավունքների պաշտպանության համար կարող է դիմել դատարան: ՀՀ օրենսդրությունը դատարան դիմելու իրավունքով օժտել է ցանկացած անձի՝ չարգելելով նաև անհիմն հայցերով դատարան դիմելու հնարավորությունը: Հետևաբար, դատական պաշտպանության իրավունքը կարելի է համարել անվերապահ իրավունք: Դա նշանակում է, որ քաղաքացու դատարան դիմելու իրավունքը որևէ բանով սահմանափակված չէ: Մինևույն ժամանակ դատարան դիմելու օրենքով սահմանված ձևը բոլոր դեպքերում ենթակա է պահպանման:

Դատական պաշտպանության և դրա բաղկացուցիչ տարր հանդիսացող «դատարան դիմելու իրավունքը» բացարձակ իրավունք չէ, և կարող է սահմանափակվել: Այն բացատրվում է վերջինիս պետական կարգավորման անհրաժեշտությամբ: Մասնավորապես, նման սահմանափակումները կարող են վերաբերվել հայցադիմումի «ընդունելիության» պարտադիր պահանջներին:

Այսպես, քաղաքացիական իրավահարաբերության սուբյեկտն իր խախտված իրավունքների պաշտպանության խնդրով կարող է դիմել ոչ թե ցանկացած դատարան, այլ այն դատարան, որն իրավասու է ըստ էության քննելու և լուծելու վեճը, այսինքն՝ գործին ըստ էության լուծում տալու իրավասություն ունեցող դատարան:

Վերը նշվածը թույլ է տալիս արձանագրելու, որ ընդդատությունը հանդիսանում է դատական պաշտպանության իրավունքի իրականացման հիմնական ձևերից մեկի՝ դատարան դիմելու իրավունքի առաջին և կարևոր քայլը, քանի որ առանց պատշաճ ընդդատության որոշման դատական պաշտպանության իրավունքը չի կարող իրականացվել:

Հետևաբար, կարող ենք փաստել, որ ընդդատությունը ունի կարևոր դեր դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման համար: Ավելին, դատարան դիմելու իրավունքն իրենից ներկայացնում է դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ մասը:

Իրավաբանական գործերը լուծելու ծանրաբեռնվածության համաչափ և գիտականորեն հիմնավորված բաշխումը մի կողմից յու-

րիստոնիկոսները տարբեր մարմինների և մյուս կողմից տարբեր իրավասության կոնկրետ դատարանների միջև արդարադատության մատչելիության սկզբունքի իրացման անհրաժեշտ պայմաններից մեկն է: Հակառակ պարագայում արդարադատության հարցում շահագրգռված անձին կարող են ունենալ իրենց իրավունքները և օրենքով պաշտպանվող շահերը շոշափող գործերի ձգձգվող և շատ հաճախ ոչ որակյալ լուծումների հետ: Հետևաբար ենթակայության և ընդդատության ինստիտուտի պատշաճ իրավական կարգավորումն անհրաժեշտ նախապայման է արդարադատության մատչելիությունն ապահովելու հարցում<sup>1</sup>:

Ընդդատության տեսական ուսումնասիրությունը անհնար է առանց նրա հասկացության և հատկանիշների սահմանման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում տրված չէ ընդդատության հասկացությունը: Մինչդեռ, իրավաբանական գրականության մեջ ընդդատությունն տարբեր կերպ է բնորոշվում:

Ընդդատության բնորոշման հարցում առկա են մի քանի մոտեցումներ: Առաջին մոտեցման համաձայն ընդդատությունը դիտարկվում է ենթակայության հետ հարաբերակցության միջոցով, ընդ որում այս մոտեցման շրջանակներում ենթակայությունը և ընդդատությունը առանձնանում են միմյանցից:

Թեև ընդդատությունը ու ենթակայությունը ունեն ընդհանուր շփման եզրեր (երկուսն էլ իրավասության տարր են), ակնհայտ է նաև այն, որ դրանք ունեն մի շարք տարբերություններ:

Ընդդատությունը դա միայն դատարանների (և ոչ թե տարբեր պետական մարմինների) միջև իրավաբանական վեճ լուծելու լիազորության տեղաբաշխումն է, իսկ ենթակայությունը իրավաբանական գործերը լուծելու լիազորությունների տեղաբաշխումն է դատական և ոչ դատական մարմինների միջև:

Այսպես, ի տարբերություն ենթակայությունը սահմանող նորմերի, որոնց օգնությամբ սահմանազատվում են ընդհանուր իրավասության, վարչական դատարանների և այլ պետական մարմինների իրավասությունը իրավաբանական գործերը քննելու և լուծելու հար-

---

<sup>1</sup> Տե՛ս **Մեղրյան Ս. Գ.**, Քաղաքացիական և վարչական գործերի դատական ենթակայությունը որոշելու չափանիշները // Պետություն և իրավունք, Եր., 2010, թիվ 2 (48), էջ 29-30:

ցում, ընդդատության կանոնների օգնությամբ որոշվում է դատական համակարգի ներսում կոնկրետ դատարանների լիազորությունները՝ իրավաբանական գործերը քննելու և լուծելու հարցում:

Ընդդատությունն իրենից ներկայացնում է ենթակայության հետազա զարգացումը: Ենթակայությունը և ընդդատությունը, չնույնանալով միմյանց հետ, ուղղված են կոնկրետ գործը քննելու և լուծելու հարցում դատարանի լիազորությունների պարզմանը: Սկզբում դատարանին անհրաժեշտ է պարզել, թե տվյալ վեճը ենթակա է արդյոք ընդհանուր իրավասության դատարանին ընդհանրապես, որից հետո պարզել, թե միասեռ դատարաններից կոնկրետ որին է այն ընդդատյա<sup>1</sup>:

Այսպիսով, թեև ենթակայության և ընդդատության միջոցով որոշվում է կոնկրետ գործը քննելու իրավասությունը և երկուսն էլ կազմում են իրավասության բովանդակությունը, սակայն ենթակայությունը և ընդդատությունը տարանջատվում են միմյանցից: Նշված ինստիտուտների տարանջատման հիմնական պատճառը այն հետևանքների տարբերության մեջ է, որոնք վրա են հասնում ենթակայության և ընդդատության կանոնների չպահպանման արդյունքում:

Այսպես, ենթակայությունը և ընդդատությունը միմյանցից սահմանազատվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված հայցադիմումը վերադարձնելու և հայցադիմումի ընդունումը մերժելու դատավարական հետևանքների օգնությամբ:

Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատավորը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե վեճը ենթակա չէ դատարանում քննության:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե գործն ընդդատյա չէ տվյալ դատարանին:

Վերը նշված հոդվածներում օգտագործվում է (դատարան) եզրույթը, մի դեպքում այն կապելով ենթակայության, մյուս դեպքում ընդդատության հետ:

---

<sup>1</sup> Ст' у "Гражданский процесс " учебник, под редакцией В. А. Мусина, Н. А. Чечиной, Д. М. Чечога, Москва, 1997, էջ 114:



Հետևաբար, կարևոր է դառնում այն հարցադրման պատասխանը, թե ինչ բովանդակությամբ է օգտագործվում «Դատարան» եզրույթը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում:

ՀՀ ՔԴՕ 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն. «Հայաստանի Հանրապետության դատարաններում (այսուհետ՝ դատարաններ) քաղաքացիական գործերով դատավարության կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով»:

ՀՀ ՔԴՕ 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Քաղաքացիական բոլոր գործերն ընդդատյա են առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանին»:

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի<sup>1</sup> 1-ին հոդվածի համաձայն. «Սույն օրենսգիրքը սահմանում է Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում (այսուհետ՝ վարչական դատարան), Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանում (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) և Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում (այսուհետ՝ վճռաբեկ դատարան, իսկ բոլորը միասին այսուհետ՝ դատարան) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական և վարչական ակտերի, գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց դեմ վարչական մարմինների և պաշտոնատար անձանց հայցադիմումների քննության կարգը»:

Վերոհիշյալ նորմերի հիման վրա կարելի է եզրակացնել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի իմաստով դատարան եզրույթը ներառում է միայն այն դատարանները, որոնք օժտված են քաղաքացիական գործեր քննելու իրավասությամբ: Ընդ որում, դրանց շարքին չի կարելի դասել վարչական դատարանը, բա-

---

<sup>1</sup> Ընդունվել է 05.12.2013 թ., ուժի մեջ է մտել 01.01.2014թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2013.12.28/73(1013).1: Այսուհետ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք կամ ՀՀ ՎԴՕ:

ցառությամբ այն դեպքերի, երբ ներկայացված են լինում միմյանց հետ կապված մի քանի պահանջներ, և դրանցից հիմնական պահանջը ընդդատյա է լինում վարչական դատարանին:

Հետևաբար, ՀՀ ՔԴՕ իմաստով «վեճը ենթակա չէ դատարանում քննության» եզրույթը պետք է մեկնաբանել այն իմաստով, որ վեճը ենթակա չէ ընդհանուր իրավասության դատարանի քննությանը, այսինքն՝ տվյալ դեպքում գործ ունենք ենթակայության հետ: Իսկ այն դեպքերում, երբ օգտագործվում է «գործը ընդդատյա չէ տվյալ դատարանին» կապակցությանը, ապա տվյալ դեպքում գործ ունենք ընդդատության հետ, այսինքն՝ գործը ենթակա է ընդհանուր իրավասության դատարանին, սակայն ընդդատյա չէ այն տարածքի դատարանին, որին ներկայացվել է հայցադիմումը:

Հետևաբար, ենթակայության կանոնի խախտման պարագայում դատարանը պետք է մերժի հայցադիմումի ընդունումը, իսկ ընդդատության կանոնի խախտման պարագայում՝ վերադարձնի հայցադիմումը:

Ե՛վ ենթակայությունը, և՛ ընդդատությունը տարբեր բովանդակություն ունեն, սակայն տրամաբանորեն կապված են իրար հետ, լրացնում են միմյանց և միայն այդ երկուսի համակցությունն է հանդես գալիս որպես քաղաքացիական գործը տվյալ կոնկրետ դատարանի քննությանն ու լուծմանը հանձնելու միասնական պայման<sup>1</sup>:

Ընդդատությանը և ենթակայության տարբերակումը հնարավոր է իրականացնել նաև այն խնդիրների օգնությամբ, որոնք ընկած են այս երկու ինստիտուտների հիմքում:

Այսպես, ենթակայության ինստիտուտի հիմնական խնդիրը դատական համակարգի առանձին օղակների մասնագիտացմանը համապատասխան դատարանների միջև տարբեր տեսակի վեճերի բաշխումն է:

Մինչդեռ, ընդդատության ինստիտուտի խնդիրը այն է՝ քաղաքացիական գործերի բաշխումն ընդհանուր իրավասության դատարանների միջև՝ դրանց առավել արագ և ճիշտ քննությունը և լուծումը, իրավունքների, ազատությունների և օրինական շահերի առավել արդյունավետ պաշտպանությունը ապահովելու նպատակով: Ընդ-

---

<sup>1</sup> Տե՛ս, **Պետրոսյան Ռ. Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, - երրորդ հրատ., Երևանի համալս. հրատ., Եր., 2007, էջ 264:

դատությունը որոշում է ոչ թե դատական պաշտպանության դիմելու սուբյեկտիվ իրավունքի առկայությանը, այլ նրա իրականացումը օրենքով սահմանված կանոններին համապատասխան<sup>1</sup>:

Դատավարական գրականության մեջ առկա են նաև ընդդատությանը տրված այնպիսի հասկացություններ, որոնք ենթակայությունները և ընդդատությունը դիտարկում են մեկ հասկացության շրջանակներում:

Յու. Կ. Օսիպովի կարծիքով «Ընդդատությունը դա դատարաններին ենթակա իրավաբանական գործի վերաբերելիությունն է որոշակի դատարանի քննությանը»<sup>2</sup>: Գտնում ենք, որ ընդդատության նման սահմանումը թերի է, մասնավորապես այն չի տալիս այն հարցի պատասխանը, թե ինչ իրավական հատկանիշների ուժով է հենց այդ դատարանը իրավասու որպես առաջին աստյան քննելու կոնկրետ գործը: Այդ իսկ պատճառով գտնում ենք, որ «վերաբերելի» տերմինը չի կարող ամբողջությամբ արտացոլել «ընդդատության» հասկացության իրավական առանձնահատկությունները:

Վ. Ֆ. Տարանենկոյի տրված ընդդատության սահմանումը փոքրինչ այլ է, սակայն իմաստով գրեթե նույն է: Նրա կարծիքով դա «դատարանների քննությանը ենթակա գործերի բաշխումն է տվյալ դատական համակարգի տարբեր դատարանների միջև»<sup>3</sup>: Ավելի վաղ նման տեսակետ առաջ էր քաշել Ա. Ա. Դոբրավոլսկին<sup>4</sup>: Նշված սահմանումը ևս ամբողջական չէ: Այսպես, ինքն իրենով դատարանների քննությանը ենթակա գործերի բաշխումը դեռևս ընդդատություն չէ, այն ընդդատությունը որոշելու առաջին քայլն է, գործողություն դատարանի ընդդատությունը որոշելու համար, որին արդեն պետք է հետևի կոնկրետ չափանիշների սահմանումը, որոնց հիման վրա կարելի է որոշել թե առաջին աստյանի որ դատարանին է ընդդատյա կոնկրետ գործը: Ավելի տրամաբանական կլիներ, որոշել նախ ընդ-

---

<sup>1</sup> St' u **Жилин Г. А.**, Цели гражданского судопроизводства и их реализация в суде первой инстанции, М., 2000, էջ 34:

<sup>2</sup> St' u **Гражданский процесс, учебник, ответственный редактор проф., Осипов Ю. К.**, издательство БЭК, Москва, 1995 г., էջեր 136-137:

<sup>3</sup> St' u **"Гражданский процесс"** учебник, ответственный редактор проф. **Шакарян М. С.**, Москва, 1993 г., էջեր 162-165:

<sup>4</sup> St' u **Советский гражданский процесс/ Под ред. А. А. Добровольского и А. Ф. Клсынмана**, М., 1970, էջ 13:

դատության որոշելու չափանիշները, հետո նոր նշված չափանիշների հիման վրա քաղաքացիական գործերը բաշխել դատարանների միջև:

Երկրորդ մոտեցման համաձայն ընդդատությունը դիտարկվում է իրավասության հասկացության շրջանակներում:

Այսպես, օրինակ, Յու. Կ. Օսիպովն ընդդատությունը սահմանում էր որպես «դատական մարմիններին ենթակա առաջին ատյանի գործերով տարբեր դատարանների իրավասություն»<sup>1</sup>: Սակայն նշված սահմանման հետ դժվար է համաձայնվել, քանի որ կասկած է հարուցում ընդդատության սահմանման մեթոդը «իրավասություն» հասկացության սահմանման միջոցով:

Մրա հետ կապված անհրաժեշտ է իրավասության շրջանակներում առանձնացնել առարկայական իրավասությունը, որը վերաբերում է միայն դատարանին ենթակա գործերի շրջանակին և որը կարող է սահմանվել որպես ֆիզիկական և իրավաբանական անձանց օրենքով պաշտպանվող իրավունքների և ազատությունների վերաբերյալ վեճերի լուծման լիազորությունների համագումար<sup>2</sup>: Իրավաբանական գրականության մեջ արդեն կարծիք կա այն մասին, որ ենթակայությունը և ընդդատությունը ընդգրկում են միայն առարկայական լիազորությունները, իսկ իրավասության մյուս մասը կազմում են ֆունկցիոնալ լիազորությունները՝ արդեն դատարանի կողմից վարույթ ընդունված գործերը քննելու և լուծելու իրավունքը և պարտականությունը<sup>3</sup>:

Կարելի է համաձայնվել Յ.Կ. Օսիպովի տեսակետի հետ, որի համաձայն՝ այդպիսի տարբերակումը պայմանավորված է լիազորության և նրա օբյեկտի միջև առկա տարբերությամբ: Եթե առարկայական իրավասությունը բնութագրում է այդ կապը լիազորության սուբյեկտի (համապատասխան մարմնի) տեսանկյունից, ապա են-

---

<sup>1</sup> St' u **Осипов Ю. К.**, Подведомственность и подсудность гражданских дел, М., 1962, էջ 92:

<sup>2</sup> St' u **Козлов А. Ф.**, Суд первой инстанции как субъект советского гражданского процессуального права, Томск, 1983. էջ 55: **Щеглов В. Н.**, Основы гражданского законодательства и основы гражданского судопроизводства СССР и союзных республик, Саратов, 1981, էջ 127:

<sup>3</sup> St' u **Музюкин В. Я.**, Подведомственность гражданско-правовых споров с участием граждан, Автореферат дис. ... канд. юр. наук, Томск, 1985, էջ 7:

թակայությունը օբյեկտի (այն հարցերի շրջանակը, որը կարող է լինել որևէ մարմնի լիազորությունների օբյեկտ) տեսանկյունից: Այդ կերպ, «Իրավասությունը», այդ թվում և առարկայականը, դա համապատասխան մարմնի լիազորությունների համագումարն է, իսկ ենթակայությունը միայն օբյեկտների շրջանակ, որին ուղղված են այդ լիազորությունները<sup>1</sup>:

Այլ կերպ ասած, եթե իրավասությունը սահմանում է կոնկրետ մարմնի մոտ լիազորությունների առկայությունը կոնկրետ հարցերի շրջանակը լուծելու հարցում, ապա ենթակայությունը և ընդդատությունը կոչված են որոշելու այն իրավաբանական գործերի շրջանակը, որին համապատասխան մարմինը կարող է ուղղել իր լիազորությունները:

Պետք է նշել, ենթակայության, ընդդատության, իրավասության հետ միաժամանակ հաճախ օգտագործվում է ևս մեկ, ավելի ընդհանուր նշանակության եզրույթ, որն է «յուրիսդիկցիա»-ն: Որոշ երկրներում իրավասություն, յուրիսդիկցիա կատեգորիաները ունեն ընդհանուր տերմին, այսպես Ֆրանսիայում «competence» բառը ունի մի քանի նշանակություն, այնպես ինչպես որ անգլիական «jurisdiction» տերմինը<sup>2</sup>:

Սակայն, պետք է նշել, որ «յուրիսդիկցիա»-ն առավել լայն հասկացություն է, նշանակում է ցանկացած պետական մարմնի (այդ թվում՝ դատարանի) իրավասությունը (ունակությունը) հանդես գալու մասնավոր վեճի կարգավորիչի դերում, ուստի ընդգրկում է և՛ ենթակայությունը, և՛ ընդդատությունը, ինչպես նաև տվյալ մարմնի իրավասությունը ընդհանրապես: Տվյալ բառի լայն բառարանային նշանակությունը տրվում է իբրև «կառավարության ընդհանուր լիազորություն՝ իրականացնելու իշխանություն իր տարածքում գտնվող բոլոր անձանց ու իրերի նկատմամբ»: Ավելի նեղ իմաստով «յուրիսդիկցիան» դա դատարանի լիազորությունն է լուծելու վեճի առար-

---

<sup>1</sup> St' u **Осипов Ю. К.**, Подведомственность юридических дел, Свердловск, 1973, էջ 18:

<sup>2</sup> St' u **Елисеев Н. Г.**, Гражданское процессуальное право зарубежных стран. Источники, судоустройство, подсудность, М., 2000, էջ 71:

կան և նախատեսում է պատշաճ կազմավորված դատարան՝ կողմերի և վեճի առարկայի նկատմամբ վերահսկողությամբ<sup>1</sup>:

Այս տերմիններից յուրաքանչյուրը բավականաչափ հստակ պատկերացում է տալիս տարբեր մարմինների լիազորությունների, նրանց կողմից իրականացվող գործառնությունների և նրանց իրավասության ներքո գտնվող հարցերի շրջանակի մասին:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ ընդդատությունը ենթակայության հետ միասին համարվում են իրավասության տարբեր: Հետևաբար, իրավասություն տերմինն ավելի լայն է, քան ընդդատություն տերմինը, թեև անխզելիորեն կապված է վերջինիս հետ:

Ընդդատությունն առաջին հերթին հանդիսանում է դատավարական ինստիտուտ, որը սահմանում է դատարանի իրավասությունը որոշակի գործերի նկատմամբ, որը նա պետք է քննի, երկրորդ՝ արտացոլում է առաջին ատյանի դատարանի իրավասությունն ի տարբերություն գործերը վերաքննության, վճռաբեկության կարգով, նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով քննող դատարանների, այն դեպքում երբ իրավասությունը որոշում է դատարանների լիազորությունների շրջանակը և բնույթն ընդհանուր առմամբ ի տարբերություն այլ պետական և վարչական մարմինների<sup>2</sup>:

Դատավարական գրականության մեջ առկա երրորդ մոտեցման համաձայն ընդդատությունը սահմանվում է որպես քաղաքացիական գործի հատկանիշ (բնույթ):

Այսպես, Վ. Վ. Կոմարովն առաջարկում է ընդդատությունը հասկանալ որպես «Կոնկրետ քաղաքացիական գործի հատկանիշ, որին համապատասխան այն ենթակա է առաջին ատյանի այս կամ այն դատարանի քննությանը»<sup>3</sup>: Մակայն, ընդդատության նման սահմանումը քննադատության չի դիմանում:

Գտնում ենք, որ ընդդատությունը չի հանդիսանում քաղաքացիական գործի հատկանիշ: Ավելին, քաղաքացիական գործի ընդդա-

---

<sup>1</sup> St' u **Վարապետյան Դ. Վ.**, Ընդդատության ինստիտուտի կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում, Թեկնածուական ատենախոսություն, Երևան, 1999, էջ 14:

<sup>2</sup> St' u **Соловьев В., Громов Н., Симшин В.**, Подсудность, ее признаки и значение / Российская юстиция, 1995, Л15, էջ 25:

<sup>3</sup> St' u Гражданское процессуальное право Украины / Под ред. **В. В. Комарова** (Автор главы - Комаров В. В.), Харьков, 2002, էջ 201:

տությունը և քաղաքացիական գործի հատկանիշը լիովին տարբեր հասկացություններ են:

Յ. Կ. Օսիպովը համարյա կես դար առաջ նշում էր, որ «Հատկանիշը միայն առարկայի արտաքին հատկությունն է, որը անխզելիորոն կապված է վերջինիս հետ և գոյություն չունի նրանից անկախ»<sup>1</sup>: Իրավաբանական գործի հատկանիշը «մշտական արժեք» է, որովհետև այն որոշվում է վիճելի նյութական իրավահարաբերության բնույթով, որը օրենսդիրը փոխել ի գորու չէ: Միննույն քաղաքացիական գործի ընդդատությունը իր հերթին կարող է փոխվել կախված հասարակության և պետության գոյության կոնկրետ սոցիալ-տնտեսական և քաղաքական-իրավական բնույթի փոփոխություններից<sup>2</sup>:

Այսպես, օրինակ, մինչև գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի ընդունումը հանրային կամ այլընտրանքային ծառայությունից ազատվելու մասին վեճը ընդդատյա էր ընդհանուր իրավասության դատարանին: Գործող վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հանրային կամ այլընտրանքային ծառայություն ազատելու հետ կապված վեճերն արդեն ընդդատյա են վարչական դատարանին:

Նշված գործերի բնույթը (հատկանիշը) չի փոխվել՝ դրանք շարունակում են մնալ հանրային բնույթի, սակայն փոխվել է նրանց առարկայական ընդդատությունը:

Հիմք ընդունելով ընդդատության սահմանումը՝ որպես իրավաբանական գործի հատկանիշ, կարելի է եզրակացնել կոնկրետ իրավաբանական գործի և դատական մարմնի միջև առկա կոշտ կապի մասին: Սակայն իրավաբանական գործի և դատական մարմնի միջև առկա այդպիսի կոշտ կախվածությունը չի կարող բացատրել քաղաքացիական գործի ընդդատության ընդհանուր կանոնից նախատեսված բացառությունները:

Այսպես՝ քաղաքացիական դատավարության օրենսգրքով բացի ընդհանուր տարածքային ընդդատությունից նախատեսված է այլընտրանքային ընդդատություն (ՔԴՕ 83-րդ հոդված) և բացառիկ ընդդատություն (ՔԴՕ 85-րդ հոդված):

<sup>1</sup> Տե՛ս **Осипов Ю. К.** Подведомственность юридических дел, Свердловск, 1973, էջ 29:

<sup>2</sup> Տե՛ս **Осокина Г. Л.**, Курс российского гражданского процесса, Томск, 2002, Т. 1. էջ 329:

Քաղաքացիական դատավարության իրավունքում ընդդատության ընդհանուր կանոնից նախատեսված բացառությունները լիովին կարող են բացատրվել, եթե գործի իրավաբանական հատկանիշը դիտարկվի ոչ թե որպես ընդդատություն, այլ ընդհամենը որպես օբյեկտիվ չափանիշներ նրա որոշման համար: Օբյեկտիվ այն իմաստով, որ գործի իրավաբանական հատկանիշը որոշվում է վիճելի նյութական իրավահարաբերության բնույթով, որը կախված չէ օրենսդրի կամքից և ցանկությունից, և հետևաբար չի կարող նրա կողմից փոփոխվել: Օբյեկտիվ չափանիշներով առաջնորդվելիս օրենդիրը որոշում է այն մարմինը, որն իրեն բնորոշ հատկանիշների ուժով բոլորից լավ կարող է լուծել տվյալ գործը: Բացի ընդդատության որոշման օբյեկտիվ չափանիշներից կարող ենք առանձնացնել նաև սուբյեկտիվ չափանիշներ: Սուբյեկտիվ բնույթի չափանիշների տակ նկատի է առնվում պետության իրավական քաղաքականության առանձնահատկություններն այս կամ այն փուլում, իրավապահ պրակտիկայի պահանջները և սուբյեկտիվ բնույթի այլ նկատառումներ, որոնք կախված չեն իրավաբանական գործի բնույթից: Հենց սուբյեկտիվ բնույթի չափանիշներն են ազդում այս կամ այն մարմնի ենթակայության ընդլայնման և կրճատման վրա<sup>1</sup>:

Իրավաբանական գրականության մեջ տարածում է ստացել նաև ընդդատության սահմանումը՝ որպես ընդհանուր իրավասության դատարանների լիազորությունների համագումարի:

Այսպես՝ Գ. Լ. Օսոկինայի կարծիքով՝ «Ընդդատություն ասելով պետք է հասկանալ ընդհանուր իրավասության դատարանների լիազորությունները իրենց ենթակա իրավաբանական գործերի քննության և լուծման հարցում, որոնք բաշխվում են ընդհանուր կանոնների և օրենքով այդ ընդհանուր կանոններից նախատեսված բացառությունների հիմքով»<sup>2</sup>: Նշված սահմանումն ի տարբերություն վկայկոչվածների ավելի ընդգրկուն է ներկայացնում ընդդատությունը՝ տալով նրան բնորոշ մի շարք առանձնահատկություններ: Մակայն նշված սահմանումը ևս գուրկ չէ թերություններից:

---

<sup>1</sup> Տե՛ս, **Осокина Г.Л.**, Курс российского гражданского процесса. Томск, 2002. Т.1. էջ 330:

<sup>2</sup> Տե՛ս **Осокина Г. Л.**, Курс гражданского судопроизводства России, Общая часть: Учебное пособие, Томск, Изд-во Том. ун-та, 2002, էջ 383:



Այսպես, իրավաբանական գրականության մեջ առաջին ատյանի դատարանի բոլոր լիազորություններն ավանդաբար բաժանվում են առարկայականի և ֆունկցիոնալի: Առարկայական լիազորությունները վերաբերվում են դատական գործունեության առարկային, այսինքն՝ քաղաքացիական գործերին, որոնք ենթակա են դատական մարմնի կողմից լուծման: Ֆունկցիոնալ լիազորությունները կապված են արդարադատության իրականացման ֆունկցիայի հետ և ցույց են տալիս, թե դատարանը ինչ միջոցներից է օգտվում և ինչպիսի գործողություններ են կատարվում նրա կողմից արդարադատություն իրականացնելիս<sup>1</sup>: Ընդդատությունը կանոնակարգող նորմերը ընդգրկվում են առաջին ատյանի դատարանների առարկայական լիազորությունների կազմում, որոնք կոնկրետացնում են քաղաքացիական գործերը առաջին ատյանի կարգով քննելու դատարանի լիազորությունները: Այլ խոսքերով՝ տվյալ նորմերը կոնկրետ սահմանում են գործերի շրջանակը, որոնք լիազորված է քննելու յուրաքննաչուր դատական մարմին առանձին: Ընդդատության նորմերի գործողության սահմաններից դուրս առարկայական լիազորությունները անիրագործելի են:

Իրավունքների և ազատությունների պաշտպանության հետ կապված հարցերի կանոնակարգված լուծման և տարբեր դատարանների միջև գործերի բաշխման համար, անհրաժեշտ է հստակ տարանջատել դատարանների լիազորությունների ոլորտը: Այդ լիազորությունները իրավաբանական գրականության մեջ կոչվում են առարկայական, քանի որ դրանք վերաբերում են դատարանի գործունեության ոլորտին, այն քաղաքացիական գործերին, որոնք ենթակա են քննության տվյալ դատարանի կողմից:

Հետևաբար, գտնում ենք, որ ընդդատությունը դա առաջին ատյանի դատարանների միայն առարկայական լիազորությունների համագումարն է:

Ամփոփելով վերոշարադրյալը կարող ենք առանձնացնել այն հիմնական հատկանիշները, որոնք բնորոշ են ընդդատության ինստիտուտին.

---

<sup>1</sup> St' u A. Ф. Котлов, Суд первой инстанции как субъект гражданского процессуального права, Автореф. Дис...док. юрид. наук, Свердловск, 1970, էջ 17:

✓ Ընդդատությունը հանդիսանում է դատարան դիմելու իրավունքի իրականացման պայման,

✓ Քաղաքացիական գործերի ընդդատությունը սահմանվում է միայն օրենքով:

✓ Ընդդատության փոփոխումը հնարավոր է միայն օրենքով նախատեսված դեպքերում:

✓ Ընդդատությունը վերաբերում է դատարանի միայն առարկայական լիազորությունների ոլորտին:

✓ Ընդդատությունը որոշվում է ընդհանուր կանոնի և դրանից նախատեսված բացառությունների հիման վրա:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարելի է տալ ընդդատության հետևյալ հասկացությունը. *ընդդատությունը դատավարական նորմերի համակցություն է, որը կարգավորում է օրենքով սահմանված կարգով սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության ենթակա իրավաբանական գործերի բաշխումն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների միջև, ինչպես նաև գործի ընդդատությանը համապատասխան այն մի դատարանից մեկ այլ դատարանը փոխանցելու հետ կապված հարցերը:*

*Ани Микаелян*

*Аспирант кафедры гражданского процесса ЕрГУ*

## ОСНОВНЫЕ ВОПРОСЫ ПРАВОВОГО ХАРАКТЕРА И ПРИРОДЫ ИНСТИТУТА ПОДСУДНОСТИ ГРАЖДАНСКИХ ДЕЛ

В данной статье рассматриваются понятия и правовой характер института подсудности гражданских дел. В статье автор представляет три основных определения подсудности. Первый подход представляет связь подсудности и подведомственности, а также их различия. Второй подход рассматривает понятия подсудности в рамках понятия юрисдикции. Согласно третьему подходу подсудность определяется как свойство гражданского дела. В результате автор представляет ос-

новые черты института подсудности и предлагает собственную версию его определения.

*Ani Mikayelyan*  
*PHD Student of the YSU Chair of Civil Procedure*

## THE PRINCIPAL ISSUES OF THE LEGAL CHARACTER AND THE NATURE OF THE JURISDICTION OF CIVIL CASES

The article discusses the concept and the legal nature of the jurisdiction of civil cases. The author presents three basic definitions of jurisdiction. The first approach is a bond of jurisdiction (venue) and jurisdiction as well as their differences. The second approach discusses the concept of competence in the framework of the concept of jurisdiction. In a third approach the jurisdiction is defined as the feature of a civil case.

In conclusion the author presents the main features of the jurisdiction and offers her own version of the definition.

**Բանալի բառեր՝** արդար դատաքննության իրավունք, դատական պաշտպանության իրավունք, դատարան դիմելու օրենքով սահմանված կարգ, ընդդատություն, ենթակայություն, իրավասություն, յուրիսդիկցիա, առաջին ատյանի դատարանների առարկայական և ֆունկցիոնալ լիազորություններ:

**Ключевые слова:** право на справедливое судебное разбирательство, право на судебную защиту, обращение в суд в соответствии с законом, подсудность, подведомственность, компетенция, юрисдикция, предметные и функциональные полномочия суда первое инстанции.

**Key words:** the right to a fair trial, the right to judicial protection, appeal to the court in accordance with law, jurisdiction (venue), jurisdiction, competence, jurisdiction, practical and functional authorities of the Court of First Instance.